Ավելին, Դատարանն արձանագրում է, որ այս իրավունքի մասին հայցվոր կողմին պարզաբանելու անհրաժեշտություն չի ծագել, քանի որ հայցվորը գործի քննության ընթացքում հանդես է եկել փաստաբանի միջոցով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախագահողը ներկայացուցիչ-փաստաբանին չի պարզաբանում նրա իրավունքները և պարտականությունները):

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև սույն գործով ներկայացված հայցի հիմքի, առարկայի և որպես պատասխանող՝ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/65 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված նյութաիրավական պահանջի պայմաններում Դատարանը գտնում է, որ «Իքս-Արթ» ՍՊԸ-ի հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

**6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ **գրավոր միջնորդության տեսքով**: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Սույն գործով, նկատի ունենալով, որ հայցվոր «Իքս-Արթ» ՍՊԸ–ի կողմից նախապես վճարել է հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, միաժամանակ արձանագրելով, որ տվյալ դեպքում հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Անդրադառնալով Հայցվորի ներկայացուցչի՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու պահանջին՝ Դատարանն, ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությունց, արձանագրում է, որ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, ուստի սույն պարագայում հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում, Դատարանը գտնում է, որ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

**ՎՃՌԵՑ**

1. «Իքս-Արթ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ՝ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/65 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/65»

ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունը՝ «ԻՔՍ-ԱՐԹ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար ներկայացրած հայտն անբավարար գնահատելու և մերժելու, ինչպես նաև գնման գործընթացի 2-րդ չափաբաժինը չկայացած ճանաչելու մասերով անվավեր ճանաչելու և որպես հետևանք «ԻՔՍ-ԱՐԹ» ՍՊ ընկերության կողմից 2-րդ չափաբաժնի համար ներկայացված հայտը վերագնահատելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ** **Ս. ԵՐԻՑՅԱՆ**